գազանների, որքան նրանց մէջ որջացած բընակիչներից:

Լեռների եւ անտառների յօրինած դժուարութիւնների պակասը···լրացնում էին գետերը: Նրանք անցնում էին խորին, քարեղէն յատակի վրայով եւ երկու կողմից պարիսպների նման բարձր, ժայռոտ եզերքի միջով: Սեղմըված իրենց նեղ ափերի մէջ··· նրանք փրփրադէզ յորձանքներով զարկւում էին անխորտակելի սպառաժներին, որ փոքր ինչ ··· ազատ ընթացք ստանան: Երասխի ահարկու «սահանքները» ամէն մի նաւապարհորդի վրայ սարսափ էին ձգում:

Լեռների եւ ձորերի անձկութեան մէջ՝ հայոց գետերը անհամբեր էին եւ նաւարկութեան: Նրանք թոյլ էին տալիս կիրճերի վրայ նաւակներ··· երբ դուրս էին գալիս կիրճերի եւ փապարների խորքից, երբ ընթանում էին հարթ դաշտերի միջով եւ երբ՝ խաղաղ ու հանդարտ հոսանքով մօտենում էին ծովերին:

Հայոց գետերի հինգ մեծամեծ նահապետները — Տիգրիս, Եփրատ, Կուր, Երասխ, Փասիս — անհամբեր էին եւ կամուրջների: Արեւառը դեռ անզօր էր զսպելու նրանց իւր հոյակապ կամարների ներքոյ: Այդ էր պատճառը, որ Օգոստոս կայսրի կառուցած կամուրջը Երասխի վրայ՝ համարուեցաւ մի հրաշալիք, որ առիթ տուեց Վիրգիլիոսի երգերին···

Հաղորդակցութեան ոչ սակաւ արգելք էր լինում··· հայոց աշխարհի երկարատեւ ձմեռը··· Ձիւնը ծածկում էր հովիտները, լցնում էր ձորերի խորքերը, անհետացնում էր բոլոր նաւապարհները եւ կտրում էր ամէն յարաբերութիւն:

Սարսափելի էր հայոց բուքը, բորէասը: Դառնաշունչ քամին կատաղաբար տեղափոխում էր ձիւնի ահագին բլուրները եւ օդը մըթնեցնում էր սառցային թանձր փոշիով: Այդ օրհասական բոպէներում ամէն շնչաւոր թագըստի տեղ էր որոնում··· Փոքրիկների միջոցին խիստ սակաւ էր պատահում որ քարաւանը ժամաներ իր փրկութեան իջեւանին: Շատ անգամ մի քանի քայլ հեռաւորութեան վրայ, ծածկւում էր ձիւնի թանձրութեան ներքոյ:

Գարնան արեգակը բերում էր իր ջերմութեան հետ հեղեղներ: Պղտոր, աղմկալի վտակներով լցւում էին ձորերը եւ հաղորդակցութիւնը աւելի եւս դժուարանում էր: Այդ ժամանակ սարերի ստորոտներում սպիտակ, ձիւնապատ տափարակները սկսում էին հետզհետէ սեւանալ եւ ապա ծածկւում էին սքանչելի կանաչազարդութեամբ: Ծիծեռնակի ձայնի հետ լսւում էր նորածին գառնուկների բառաչը: Հովիւները իրանց վրանները զետեղում էին ծաղկազարդ արօտամարգերի վրայ:

Ժամանում էր ամառը:

Սարերի ներքեւում, տափարակների վրայ, հասունանում էր նուռը, թուզը, ձիթենին: Ոսկեգոյն սաթի նման փայլում էին խաղողի ողկոյզները: Եւ շիկահեր կոյսի գիսակների նման ծփում, ծածանւում էին ծանրացած հասկերը: Իսկ այնտեղ, վերեւում, բարձրութիւնների վրայ դեռ նկարուած էին ներմակ գագաթները եւ լայն, թանձրախիտ շերտերով մնում էր անշարժ սառնամանիքը ապառաժների յաւիտենական խոռոչների մէջ:

··· Ցած եւ դուրան տեղերում ամառնային տօթն ու տապը աւելի անտանելի էր լինում, քան ձմեռնային ցուրտը: Արեգակը այրում էր, երկինքը կրակ էր թափում: Մարդիկ, որ սովորած էին ձմեռուան ցրտից պատըսպարելու համար թագչիլ գետնափոր խըրճիթներում, այժմ արեւի կրակից ազատուելու համար, իրանց անասունների հետ հեռանում էին դէպի լեռների հովասուն բարձրութիւնները: Եւ այսպէս, իւրաքանչիւր տարուան ընթացքում կատարում էր մի տեսակ գաղթականութիւն — ջերմից դէպի ցուրտը, իսկ ցըրտից դէպի ջերմը: Բայց ամէն մի հասարակութիւն իւր գաւառի սահմաններից չէր դուրս գալիս:

Բնութեան այս տեսակ խիստ, միմիանցից տարբեր եւ միմիանց հակառակ ծայրայեղութիւնները, ստեղծեցին նոյնպէս խիստ եւ ծայրայեղ բնաւորութիւններ: Այդ էր պատճառը, որ հայոց աշխարհի բարքը, վարքը, սովորութիւնները, կենցաղավարութեան եղանակը եւ առհասարակ նրա հասարակական կազմակերպութիւնը իւր բոլոր երեւոյթներով հետեւանք էր երկրի բնական պայմանների:

Գետերը, մեծամեծ լճերը, լեռնային շղթաները··· կորստեցին երկրի մակերեւոյթը,